# Վերապատրաստման դասընթաց «Անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը» թեմայով

17.03.2026 11:44

***Հարգելի՛ փաստաբաններ,***

18.03.2026թ. ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի դատական նիստերի դահլիճում, կազմակերպելու է վերապատրաստման դասընթաց՝ **«Անձին ազատությունից զրկելու իրավաչափությունը»** թեմայով:

***Միաժամանակ տեղեկացնում ենք, որ դասընթացը լինելու է միայն առկա տարբերակով:***

- Դասընթացը կվարի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ի.գ.թ. Ռազմիկ Մարիկյանը,
- Դասընթացին մասնակցելու համար կարող եք գրանցվել՝ մինչև 18.03.2026թ. ժամը 16:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման,  Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը,
- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Վերադառնալ
$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })